
ԵՊԲՀ ՔՈԼԵՋԻ «ԱՏԱՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


Ուսանողների մասնակցություն 92 (95%)

Հարցմանը մասնակցել է 92 ուսանող (95%), ինչը շատ բարձր ցուցանիշ է և թույլ է տալիս արդյունքները համարել լիարժեք ներկայացուցչական:


1. **Նշեք որ կուրսում եք սովորում**



2. **Ձեր միջին առաջադիմությունը՝**




3. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած տեսական գիտելիքներով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)




Գրաֆիկները ցույց են տալիս, որ ուսանողների մեծամասնությունը տեսական ուսուցման ընդհանուր մակարդակը հիմնականում գնահատում է դրական: Սակայն միջին և ցածր գնահատականների որոշ տոկոսի առկայությունը վկայում է, որ տեսական նյութի մատուցման մեթոդները բարելավման որոշակի կարիք ունեն:

4. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած գործնական հմտություններով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Գործնական հմտությունների ցուցանիշը համեմատաբար բարձր է, սակայն տեսականից փոքր-ինչ ցածր: Բաց պատասխաններում ուսանողները ևս բազմիցս նշել են պրակտիկայի ավելացման անհրաժեշտությունը, հատկապես , եթե հաշվի առնենք ծրագրի տեխնիկական ուղղվածությունը:

5. **Մասնագիտական առարկաների ուսումնասիրման ժամանակ բավարար չափով հասանելիություն ունեցել եք անհրաժեշտ գործիքների, տեխնիկական միջոցների, նյութերի** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ հասանելիություն չեմ ունեցել, 5-ը՝ լիովին բավարարված եմ)




Գործիքների, տեխնիկական միջոցների, նյութերի հասանելիությունը մյուս չափանիշների համեմատ ցածր է գնահատվել, ինչը համընկնում է ուսանողների բաց պատասխանների հետ, որտեղ նշվում է՝

- անհրաժեշտ նյութերի պակաս
- գործիքակազմի անբավարարություն
- տեխնիկական հագեցվածության խնդիրներ


Սա ծրագրի զարգացման առաջնահերթ ուղղություն է, քանի որ գործնական պատրաստվածությունն անմիջապես կախված է նյութատեխնիկական ապահովվածությունից:

6. **Որքանով եք բավարարված անհրաժեշտ գրականության հասանելիությամբ** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Անհրաժեշտ գրականության հասանելիությունը միջինից բարձր է գնահատվել, սակայն առկա են նաև ցածր գնահատականներ (1 և 2 միավոր) , ինչից հետևում է, որ մասնագիտական գրականության արդիականացման կարիք կա:


7. **Որքանով լիարժեք և արդյունավետ են օգտագործվում դասաժամերը դասախոսների կողմից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ ոչ լիարժեք և անարդյունավետ, 5-ը՝ լիարժեք և արդյունավետ)




Ընդհանուր առմամբ, դասախոսների կողմից դասաժամերի արդյունավետ օգտագործումը դրական է գնահատվել, սակայն միջին գնահատականների առկայությունը վկայում է դասավանդման մեթոդների և ինտերակտիվ ձևաչափերի զարգացման անհրաժեշտության մասին: Սա համընկնում է նաև ուսանողների առաջարկների հետ, որտեղ նշվում է՝

- լեկցիոն ձևաչափի միապաղաղություն
- դասերի երկար տևողություն
- կազմակերպչական խնդիրներ

8. **Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված հանրակրթական առարկաների դասավանդման որակից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



9. **Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված մասնագիտական առարկաների դասավանդման որակից (**գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ**)**



8րդ և 9րդ գրաֆիկների տվյալները ցույց են տալիս, որ մասնագիտական առարկաների դասավանդման որակը գնահատվում է ավելի բարձր, քան հանրակրթական առարկաներինը: Սա հաստատում է, որ ուսանողները առավել արդյունավետ են համարում կիրառական և մասնագիտական ուղղվածության ուսուցումը:

10. **Ինչը** և **ինչպես կփոխեիք ուսումնական գործընթացը առավել լավը** և **արդյունավետ դարձնելու համար** (եթե առաջարկը վերաբերվում է կոնկրետ առարկային/ամբիոնին, նշեք առարկայի անվանումը , խնդիրը և/կամ առաջարկությունը):

Սույն հարցին պատասխանել է 23 ուսանող, որոնց պատասխաններն առանց խմբագրման ներկայացված են հավելված 1ում

Ուսանողների կարծիքների ընդհանրացում

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների ընդհանուր վերաբերմունքը ծրագրի նկատմամբ դրական է, հատկապես մասնագիտական առարկաների մասով: Ուսանողները բարձր են գնահատում մասնագիտական և կիրառական առարկաները (պրոթեզավորում, օրթեզավորում, նյութագիտություն, պրակտիկ դասեր և այլն): Միևնույն ժամանակ ուսանողների կարծիքներում հստակ արտահայտված է անհրաժեշտ նյութերի և գործիքակազմի ավելացման պահանջ: Նրանք ակնկալում են՝

- բավարար տեխնիկական հագեցվածություն,

- անհրաժեշտ նյութերի մշտական առկայություն,
- գործնական պարապմունքների ապահովում համապատասխան միջոցներով:

Ուսանողները ցանկանում են նաև՝

- ավելացնել պրակտիկաները,
- մեծացնել գործնական դասերի ժամաքանակը,
- ապահովել ավելի ինտերակտիվ ուսուցում:

Որպես կազմակերպչական խնդիրներ, բազմիցս նշվել են՝

- դասերի ավելի վաղ սկսելու ցանկություն (առաջին հերթ),
- դասացուցակի օպտիմալացում,
- դասաժամերի արդյունավետության բարձրացում,
- լեկցիոն ձևաչափի վերանայում:

Եզրակացություն

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների ընդհանուր վերաբերմունքը ծրագրի նկատմամբ դրական է**,** հատկապես մասնագիտական առարկաների մասով: Ուսանողների առաջարկները կառուցողական են և հիմնականում ուղղված են.

- գործնական ուսուցման ուժեղացմանը,
- նյութատեխնիկական բազայի բարելավմանը,
- ուսումնական գործընթացի կազմակերպման օպտիմալացմանը:

Առաջարկություններ կրթական ծրագրի զարգացման համար

1. Կրթության գործնական բաղադրիչի ավելացում
   Ծրագրի զարգացման առաջնահերթ ուղղություն սահմանել գործնական ուսուցման ընդլայնումը՝ ավելացնելով լաբորատոր պարապմունքները, արտադրական պրակտիկաները և կիրառական ուսուցման ձևաչափերը: Սա թույլ կտա բարձրացնել ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը և համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին:
2. Նյութատեխնիկական բազայի արդիականացում
   Ապահովել կրթական ծրագրի լիարժեք իրականացումը ժամանակակից սարքավորումներով, գործիքակազմով և նյութերով համալրված ուսումնական միջավայրում: Հատկապես կարևոր է

ատամնատեխնիկական լաբորատորիաների տեխնիկական վերազինումը և անհրաժեշտ նյութերի կայուն հասանելիությունը:

3. Դասավանդման մեթոդների արդիականացում և դասախոսական կարողությունների զարգացում

   Խրախուսել ինտերակտիվ և ուսանողակենտրոն ուսուցման մեթոդների կիրառումը, ինչպես նաև կազմակերպել դասախոսների շարունակական մասնագիտական զարգացման ծրագրեր՝ ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

4. Ուսումնական գործընթացի կազմակերպման օպտիմալացում

   Վերանայել դասացուցակի կառուցվածքը՝ ապահովելով ուսումնական ծանրաբեռնվածության հավասարակշռված բաշխում, դասաժամերի արդյունավետ օգտագործում և ուսանողների ուսուցման համար առավել նպաստավոր ժամանակային կազմակերպում:

Հավելված 1

1. Ավելի շատ գործնական դասընթացները ավելացնել, ապահովել անհրաժեշտ տեխնիկայով,ավելացնել շատ պրակտիկաներ
2. Կփոխեի Դեկանատին
3. Նախ հետախոաները դադարեն հավաքռլ,որովհետև այն օգտագործում ենք դասաժամերիբ դասագրքեր բացելով, մտնեն մեր դրության մեջ հասկանան ու կարեկցեն դասաժամերն անցկացնեն արդյունավետ հետաքրքիր, մեր համար ձանձրալի ա 80 րոպե նստել ու լեկցիա գրել փոխարենը կարող ենք հետաքրքիր ձևով անել այդ ամենը
4. Աշխարհագրություն եվ ֆիզիկա առարկաների լրիվ հանումը
5. 1 ին հերթով գալ և մինչև ժամը 2.20 ավարտել դասերը
6. Ավելի լուրջ վերաբերվել պատմողական առարկաներին
7. Հեռախոսներ չհավաքել

8. Կշատացնեինք պրակտիկաները և անհրաժեշտ նյութերը
9. Կցանկանայի որ դասերը ավելի շուտ սկսվեր
10. Առաջարկ\խնդիր չունեմ, երևի ավագ դպրոցի որոշ ուսուցիչների դասապրոցեսսը անցկացնելու խնդիր կա, երբ հատուկ իր առարկայի համար գիրք ես վերցնում, որ ավելի տպավորվի դասը, իսկ տվյալ առարլայի ուսուչուհին նկատողություն է անում, որ իրան լսելու փոխարեն «ուրիշ բանով եմ զբաղված»
11. Շատ գոհ եմ բոլոր մասնագիտական առարկաների դասախոսներից
12. Ատամնատեխնիկական գործ ֆակուլտետը չունի բավարար նյութատեխնիկական հագեցվածություն
13. Լավ կլիներ, որ տետրերի փոխարեն MacBook կամ NoteBook կիևառեինք
14. Ատամնատեխնիկներին հատկացրեք համապատասխան նյութերը և գործիքակազմը նախապես շնորհակալություն☺
15. Դասերը շուտ սկսվեին
16. Կտրամադեի Ատամնատեխիկական գործի համար անհրաժեշտ նյութեր և գործիքներ:
17. Դասերը շուտ սկսվեր
18. Շուտ դասի գալ. ավագում 2:20 ա դասերը սկսում
19. Dasamijocneri erkaracreq chenq hascnum snvenq nuynisk
20. Ավելացնել գործնական դասերը և պրակտիկաները, ապահովել անհրաժեշտ նյութերով և տեխնիկաներով
21. Օտար լեզվի ամբիոնը
22. Կցանկանայի՝ ԵՊԲՀ - ի քոլեջը բարձր առաջադիմությամբ ավարտելուց հետո, տրվեին համապատասխան արտոնություններ՝ ԵՊԲՀ ընդունվելու համար :
23. Կցանկանայի, որ դասերն ավելի շուտ սկսվեր, ցանկալի է առաջին հերթով: